№ 110 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 **1892** ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 № 110

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դպրոցական քսանհինգամեակ. Մի առաջարկութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Շուշուց. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիական հանրապետութեան հարիւրամեակը. Ամերիկացի Սոէնհօպ. Մի պաշտօնական յայտարարութիւն. Խոլերա Էրզրումի և Տրապիզոնի վիլայէթներում. Ժուժկալութեան իւզական ընկերակցութիւն Ամերիկայում. Յունաստան և Բոլգարիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերը Աւստրօ-Ունգարիայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿ

Մեզ տեղեկացնում են Վերին-Ագուլիսից,—նշանաւոր զօկերի հռչակաւոր մայրաքաղաքից,—որ այս հոկտեմբերի 22-ին լրանում է Ագուլիսի տղայոց և օրիորդաց դպրոցների հիմնարկութեան 25-ամեակը։

Մեր ժողովրդական դպրոցների պատմութեան մէջ, կամ՝ խօսելով բանաստեղծների լեզուով, մեր ժողովրդական կրթութեան գործի մռայլ հորիզոնի վրա՝ դա մի փայլուն կէտ, մի ուրախալի տեսարան է։

Սրանից քսան և հինգ տարի առաջ, երբ խաւարը տիրել էր հայ ժողովրդի մտքի վրա, երբ անմտութիւն էր համարվում աղջիկներին ուսում տալը, և երբ նոյն իսկ Թիֆլիսում նոր էր սկըսում հայկական օրիորդաց դպրոցի գործը, քսան և հինգ տարի առաջ, ասում ենք, մտաւոր կենտրոններից հեռու, Երևանից և Նախիջևանից աւելի դէպը գանվող մի անկիւնում, Պարսկաստանի ափին, Ագուլիս գիւղը յանդգնութիւն է ունենում միաբ յղանալ՝ բանալու տղայոց դպրոցի հետ միասին և աղջիկների դպրոց....

Անկասկած այն ժամանակ՝ այդ յանդուգն, նոր և չը տեսնված ձեռնարկութիւնը իր դէմ յարուցեց զօկերի հին սերնդին, գուցէ և յարուցեց ուրիշ շատ քաղաքների ժպիտը, բայց և այնպէս գործին ձեռնարկողները քաջութեամբ առաջ մղեցին սկսած գործը, և դպրոցները գնալով գնալով աւելի խոր արմատներ գցեցին, տալով Ագուլիսի հասարակութեան դրագէտ, և փոքր ի շատէ զարգացած աղջիկներ և երիտասարդներ....

Մենք աւելորդ ենք համարում խօսել այն պըտուղների մասին, որ տուել են Ագուլիսի երկսեռ դպրոցները իրանց քառորդ դարու գոյութեան ընթացքում, նոյնպէս և աւելորդ ենք համարում մատնանիշ անել այն խրատական շաւղի վրա, որով անցել են այդ դպրոցները,—դա դպրոցների պատմութեան գործն է,—մենք միայն բաւականանում ենք մատնանիշ անելով այդ քսանհինգամեակի վրա, իբրև միխիթարական, օրինակելի և ուրախալի երևոյթի վրա՝ մեր դպրոցական պատմութեան մէջ։ Մենք ունենք շատ հին դպրոցներ, մենք ունենք աւելի քան կէս դար գոյութիւն ունեցող դպրոցներ, ինչպիսի են Ներսիսեան դպրոցը և ուրիշ թեմական դպրոցներ, բայց Ագուլիսի դպրոցները, մանաւանդ օրիորդաց դպրոցը, մեր ժողովրդական դպրոցների մէջ առաջինն է, որ բոլորում է իր 25-ամեակը, և այդ պատճառով նրան է պատկանում անդրանկութեան պատիւը և անունը...

Եւ այժմ Վերին-Ագուլիսի հասարակութիւնը, որի մեծագոյն մասը աշխարհի բոլոր անկիւններում սփռված փող և հարստութիւն է որոնում, պարտաւոր է մի սիրտ, մի հոգի դարձած, յիշել իր մտաւոր կեանքի այդ դէպքի ամբողջ վեհութիւնը, և յաւերժացնել հոկտեմբերի 22-ը մի որ և է նշանաւոր ու օգտաւէտ հասարակական հիմնարկութեամբ, ինչպէս որ իր նախորդները սրանից 25 տարի առաջ, նոյն հոկտեմբերի 22-ի յաւերժայրին՝ տղայոց և աղջկերանց դպրոց հիմնելով։

Անկասկած ազուլեցիք արժանաւոր կերպով կը տօնեն այդ դպրոցական յոբելեանը, կը դրեն դպրոցների 25 տարվայ մանրամասն պատմութիւնը՝ իբրև մի ուղեցոյց ուրիշ գիւղերի նորաբողբոջ հասարակութիւնների համար, վերջապէս այդ օրը կաշխատեն ուղղել դպրոցների թերի կողմերը, ի պատիւ նրանց 25-ամեայ գոյութեան,—բայց այդ բոլորի հետ միասին, նոյն հասարակութեան վրա պարտք կայ՝ անջնջելի և չոչափելի կերպով անմահացնել այդ 25-ամեակը, հիմնելով մի Արհեստանոց, որի կարիքը մեծ է Գողթան գաւառի աղգաբնակութեան համար։

Զօկերին է պատկանում, գիւղերում առաջին՝ օրիորդական դպրոցի հիմնարկութեան պատիւը, ցանկանում ենք որ նոյն զօկերին պատկանի և գաւառական առաջին Արհեստանոցի բացման պատիւը։

Խ. Մ.

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Լրագիրներում կարդում ենք, որ ռուսաց սինոդը դիտաւորութիւն ունի եկեղեցիների համար մոմավաճառութիւնը մասնաւոր մարդկանց պրդեւել։

Եթէ ի նկատի ունենանք՝ թէ մեր եկեղեցիներում որքան մոմ է գործադրվում և աչքի առաջ ունենանք, թէ մասնաւոր մոմավաճառներ որքան օգուտ են ստանում մոմավաճառութիւնից, և եթէ մի և նոյն ժամանակ ուշենանք փոքր ինչ խնայաբար գործադրել եկեղեցիների փողը և ցանկանանք, որ մոմավաճառների ստացած օգուտը մեր եկեղեցիներին մնայ, ապա ստիպված պիտի հարցնենք. միթէ մի և նոյն կարգադրութիւնը, ինչ որ ռուսաց սինոդն է մտադիր անելու, չէ կարող և մեր սինոդն անել, միայն փոքր ինչ կերպարանափոխված։ Ի հարկէ, սինոդը շատ գործեր ունի կատարելու, շատ պարտականութիւններ կան նրա վրա դրված, սակայն մի և նոյն ժամանակ նրա պարտաւորութիւններից մինն է հոգ տանել և եկեղեցիների նիւթականի վրա, մանաւանդ որ մեր ուսումնարանների գոյութեան գլխաւոր աղբիւրը մոմավաճառութիւնից ստացած արդիւնքի մի մասն է կազմում։

Այս բոլորն ի նկատի ունենալուց յետոյ՝ ցանկալի կը լինէր, որ մեր եկեղեցիներն ևս, կամ աւելի ճիշտն ասած, մեր սինոդն ևս ունենար մոմի իր սեփական ձուլարանը, ուր ամէն տեսակ մոմ կարելի լինէր պատրաստել։ Այդպիսի մի ձուլարան կարելի կը լինի հիմնել եթէ ոչ Էջմիածնում, գոնէ Թիֆլիսում, հսկողութիւնը թեմական առաջնորդին կամ կօնսիստորիային յանձնելով. ի հարկէ, թէև դրանով սրանց նեղութիւնները փոքր ինչ կաւելանան, սակայն ինչ արած, առանց նեղութիւն կրելու և առանց աշխատելու ոչ մի բան գլուխ չի գայ և ոչ մի գործ ցանկալի արդիւնք չի տայ։ Ձուլարանը հիմնելուց յետոյ, կարելի է մեր բոլոր երեցփոխներին պարտաւորեցնել, որ միայն այդ ձուլարանից կամ որոշած պահեստից մոմ գնեն, այդպիսով և աւելի էժան գնով կարելի է մոմ ձեռք բերել և այն օգուտը, որ մասնաւոր մոմավաճառներն են ստանում, այժմ կարող է ձուլարանը կամ պահեստը ստանալ և առժամանակ ձուլարանը կանոնաւորելու համար գործադրել. իսկ յետոյ հոգալոր վարչութեան տնօրէնութեան ներքոյ դնել։ Եւ որովհետև հեռաւոր գիւղեր ևս շատ կան, որոնց համար բաւական դժուար կը լինի ուղղակի կենտրոնից մոմ ձեռք բերել, այդ պատճառով գաւառական մի քանի աչքի ընկնող քաղաքների հոգալոր վարչութիւնների կամ գործակալների հսկողութեան ներքոյ կարելի է մասնաւոր պահեստներ հիմնել, իբրև ճիւղեր կենտրոնի, իսկ այդ մասնաւոր պահեստներից օգտվելն այնքան էլ դժուարութիւն չի ներկայացնի հեռաւոր գիւղական եկեղեցիների համար։

Այս առաջարկութիւնն իրագործելու համար, կարծում ենք որ սինոդը մի առանձին դժուարութեան և արգելքի չի հանդիպի, մանաւանդ որ, եթէ չենք սխալվում, այդ հարցի մասին լրագիրներում դարձեալ գրվել է, հետևապէս և այս հարցն աւելի պարզված կարելի է համարել։ Ցանկալի կը լինէր, որ ձեռնհաս անձինք այժմ ևս չը զլանային իրանց կարծիքը յայտնելու և աւելի դիւրին միջոցներ ցոյց տալու գործի յաջողութեան և իրականացնելու մասին։

Ա.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Սեպտեմբերի 17-ին

Սեպտեմբեր ամիսը բերեց զով օրեր։ Եղանակը այժմ կատարեալ հով է։ Քաղաքիս մէջ այժմ տիրում է կատարեալ անգործութիւն։ կեանքը կարծես մեռած է։ Խոլերայի պատճառով՝ զօրքերի յարաբերութիւնը քաղաքի հետ արգելված է։ Քաղաքումս չը կան գործարաններ, չը կան օրինակելի արհեստանոցներ, եղածները հին նահապետական ձևով են, որոնց մասին շատ քիչ յոյս կայ առաջ գնալու։

Այս տարվայ անաջող հունձը բոլորովին մոլորեցրել է մեր շինականներին։ Հացը այս տարի Շիրակում շատ սակաւ է։ Արտերի մեծ մասը փչացաւ առանց անձրևի։ Շատ տեղ ցանած սերմն էլ դուրս չեկաւ։ Հասկանալի է, թէ որքան խեղճ կը լինի մի գաւառի բնակիչը, երբ իր ցանած սերմնացուն էլ իր ձեռը չի դայ։ Ինչով պէտք է ապրեն։ Դեռ հացի սակաւութիւնը տանելի է։ Բանական մարդը կը հասկանայ թէ ինչ ասել է «չը կայ» խօսքը. ապա ինչ անեն անլեզու, անհասկացող անասունների հետ... Խոտ այս տարի Շիրակում բոլորովին չը կայ։ Մէկ «ճաթանը» (50 պուդ), որ անցեալ տարի արժէր 3 ր., այժմ 30 ր. են գնահատում։ Պարզ է որ շատերը գիւղացիներից չեն կարող կերակրելու իրանց ունեցած եզներին և կովերին, այլ ստիպված կը լինեն ծախել նրանց. և իրօք, բոլորն էլ քշում են քաղաք՝ ծախելու։ Մարդու լացը գալիս է, երբ 50—60 ռուբլի արժեցող եզը կամ կովը պարսիկ «ջանպազը» (անասնավաճառ) գնահատում է 8—9 ր. Ինչ անէ խեղճ գիւղացին, ում դիմէ. արդեօք վաշխառու մի հարուստ կենտրոնի, իսկ այդ մասնաւոր պահեստներից օգտվելն այնքան էլ դժուարութիւն չի ներկայացնի հեռաւոր գիւղական եկեղեցիների համար։

Այս առաջարկութիւնն իրագործելու համար, կարծում ենք որ սինոդը մի առանձին դժուարութեան և արգելքի չի հանդիպի, մանաւանդ որ, եթէ չենք սխալվում, այդ հարցի մասին լրագիրներում դարձեալ գրվել է, հետևապէս և այս հարցն աւելի պարզված կարելի է համարել։ Ցանկալի կը լինէր, որ ձեռնհաս անձինք այժմ ևս չը զլանային իրանց կարծիքը յայտնելու և աւելի դիւրին միջոցներ ցոյց տալու գործի յաջողութեան և իրականացնելու մասին։

Ա.

Սեպտեմբերի 17-ին

Սեպտեմբեր ամիսը բերեց զով օրեր։ Եղանակը այժմ կատարեալ հով է։ Քաղաքիս մէջ այժմ տիրում է կատարեալ անգործութիւն։ կեանքը կարծես մեռած է։ Խոլերայի պատճառով՝ զօրքերի յարաբերութիւնը քաղաքի հետ արգելված է։ Քաղաքումս չը կան գործարաններ, չը կան օրինակելի արհեստանոցներ, եղածները հին նահապետական ձևով են, որոնց մասին շատ քիչ յոյս կայ առաջ գնալու։

Այս տարվայ անաջող հունձը բոլորովին մոլորեցրել է մեր շինականներին։ Հացը այս տարի Շիրակում շատ սակաւ է։ Արտերի մեծ մասը փչացաւ առանց անձրևի։ Շատ տեղ ցանած սերմն էլ դուրս չեկաւ։ Հասկանալի է, թէ որքան խեղճ կը լինի մի գաւառի բնակիչը, երբ իր ցանած սերմնացուն էլ իր ձեռը չի դայ։ Ինչով պէտք է ապրեն։ Դեռ հացի սակաւութիւնը տանելի է։ Բանական մարդը կը հասկանայ թէ ինչ ասել է «չը կայ» խօսքը. ապա ինչ անեն անլեզու, անհասկացող անասունների հետ... Խոտ այս տարի Շիրակում բոլորովին չը կայ։ Մէկ «ճաթանը» (50 պուդ), որ անցեալ տարի արժէր 3 ր., այժմ 30 ր. են գնահատում։ Պարզ է որ շատերը գիւղացիներից չեն կարող կերակրելու իրանց ունեցած եզներին և կովերին, այլ ստիպված կը լինեն ծախել նրանց. և իրօք, բոլորն էլ քշում են քաղաք՝ ծախելու։ Մարդու լացը գալիս է, երբ 50—60 ռուբլի արժեցող եզը կամ կովը պարսիկ «ջանպազը» (անասնավաճառ) գնահատում է 8—9 ր. Ինչ անէ խեղճ գիւղացին, ում դիմէ. արդեօք վաշխառու մի հարուստ կենտրոնի, իսկ այդ մասնաւոր պահեստներից օգտվելն այնքան էլ դժուարութիւն չի ներկայացնի հեռաւոր գիւղական եկեղեցիների համար։

Այս առաջարկութիւնն իրագործելու համար, կարծում ենք որ սինոդը մի առանձին դժուարութեան և արգելքի չի հանդիպի, մանաւանդ որ, եթէ չենք սխալվում, այդ հարցի մասին լրագիրներում դարձեալ գրվել է, հետևապէս և այս հարցն աւելի պարզված կարելի է համարել։ Ցանկալի կը լինէր, որ ձեռնհաս անձինք այժմ ևս չը զլանային իրանց կարծիքը յայտնելու և աւելի դիւրին միջոցներ ցոյց տալու գործի յաջողութեան և իրականացնելու մասին։

Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Ա.

Լեհաստանում

Բ.

Աւստրիական Լեհաստանում հայութիւնն ամենից աւելի պահուած է Կուտի քաղաքում (Kutty)։ Այստեղ ժողովուրդը ոչ թէ միայն ընդհանրապէս խօսում է հայերէն, տեղական բարբառով, և նոյնը դեռ ևս իր ընտանեկան լեզուն է պահած, այլ նաև եկեղեցական ժամերգութեան ժամանակ, մանաւանդ շաբաթ երեկոները մասնակցում է շարականների երգելուն, զալիրների հետ, ըստ նախնի սովորութեան հայ եկեղեցու։ Եւ այստեղ, դժբախտաբար, ժողովրդապետ է նշանակված այնպիսի մի քահանայ, որ հայերէն խօսել չը գիտէ. կարդում է, պատարագում է հայերէն, առանց շատ անգամ իր կարդացածի իմաստն ըմբռնելու։ Կուտեցիք իրաւամբ դանդատվում են, որ «տէր-տէրը հայնակ չի զրուցի», այսինքն՝ քահանան հայերէն չէ խօսում (թէև ինչպէս վերը յիշեցինք, քահանաքը բոլորն էլ կուսակրօն են, բայց ժողովուրդը իր սովորութեան համեմատ դարձեալ նրանց տէրտէր է կոչում)։ Այսպիսի հայախօս տեղեր այցելում են երբեմն Վիէննայի Մխիթարեաններն, և ժողովուրդը միշտ առանձին ուրախութեամբ է ընդունում նրանց, որ կարողանում է նրանց հետ հայերէն խօսել և տեղեկութիւններ առնել ուրիշ տեղերի աղգակիցների մասին։ Բայց դրա հակառակ թեմական կղերը՝ սկսեալ արքեպիսկոպոսից, առ հասարակ խէթ աչքով են մըտիդ տալիս Մխիթարեանների վրա, վասն զի սրանք խիստ կաթոլիկ լինելով հանդերձ՝ միշտ թէ պահում են անվթար և թէ տարածում են հայ լեզու և ազգայնութիւն, որից այնքան հեռացել է Լեհաստանի հայ-կաթոլիկ կղերի մեծագոյն մասը։

Լեհաստանում Կուտիի (կաթոլիկ) և Ունգարիայում էլ Սուչավայի (լուսաւորչական) մէջ է, որ փոքր ի շատէ մնացած է հայութիւն և հայերէն լեզու, բայց դժբախտաբար մայրենի լեզուի ուսումը նաև այս տեղեր ոչ թէ յառաջանալու, այլ ընդհակառակը յետադիմելու վրա է։ Նախ այդ հայերէն խօսողներն իրանք ընդհանրապէս հայերէն գիրք չեն կարդում և դպրոցների մէջ էլ այլ ևս հայերէն դաս չի տրվում։ Եկեղեցիներում քարոզները լեհերէն են տրվում, երբեմն էլ ռութեներէն, և որ աւելի ցաւալին է՝ Կուտիում նոր սերունդի համար մայրենի սովորական լեզուն այլ ևս հայերէնը չէ, այլ լեհերէնը, ինչպէս որ է նոյնը Լեհաստանի բոլոր միւս քաղաքների հայ ընտանիքների համար։ Իսկ Սուչավայում նոյն դերը կատարում է ռումինարէնը։

Միակ հայերէն թերթն, որ ոմանք, ինչպէս Դաւիդովիչ, Մովսէսովիչ և այլն, ստանում և կարդում են, Վիէննայի «Հանդէս Ամսօրեայն» է։ Բացի դրանից կայ այդտեղ ոմանց մօտ՝ նաև Ունդարայեղու «Արմէնիան»։

Թէ Ունգարիայում և թէ Գալիցիայում մի ժամանակ հայերէն լեզուն պարտաւորիչ էր դպրոցների մէջ հայ աշակերտների համար, այնպէս որ եթէ հայ աշակերտը դպրոցական ուսման բոլոր առարկաները լաւ սովորած լինէր, բայց հայերէնից չը կարողանար գոհացուցիչ քննութիւն տալ, նա չէր կարող իր դասարանը փոխել և քննութիւնից ընկած էր համարվում։ Այս կարգադրութեան խափանման պատճառն էլ, ինչպէս մեզ պատմեցին, մի հայ է եղել դարձեալ։ Այս պարոնի որդին՝ միանգամ քննութիւն է տուել գիմնազիական բոլոր առարկաներից, բայց որովհետև հայերէն լեզուի մէջ տկար է եղել, ուստի և դպրոցական վարչութիւնը նրան չէ փոխադրել հետևեալ դասարանը։ Հայրը գանգատվել է այս մասին կրթութեան մինիստրին և կառավարութիւնը քննելով այս գանգատը, որոշել է հայերէնը դուրս հանել դպրոցական ծրագրի պարտաւորեալ առարկաների կարգից։ Այս կարգադրութեան հիման վրա դպրոցական վարչութիւններն ընականաբար այլ ևս ուշադրութիւն չեն դարձրել հայերէնին, և այնուհետև հայ տղայք էլ հետզհետէ դադարել են պետական դրոցներում հայերէն սովորելուց։

Լեհաստանի և Բուքովինայի թէ քաղաքային կաթոլիկ և թէ փոքրաթիւ լուսաւորչական հայերի՝ իրանց ազգութիւնից հեռանալն և իրանց մայրենի լեզուն կորցնելը այնպիսի բնական երևոյթ է, որ դժբախտաբար այսօր նոյնը կարող ենք շատ տեղերի հայոց վրա նկատել։ Երբ մի փոքր հասարակութիւն, առանց որոշ կրթութեան ատիճանի և առանց մի ընդհանուր կապի՝ ցրվում մի ամբողջ երկրում, այնպիսի մի ժողովրդի մէջ, որ նրանից ամէն կերպով բարձր է կանգնած, երբ այս սակաւաթիւ հասարակութիւնն ամէն օր չփվում է անընդհատ օտար տարրի հետ և գտնվում է իրանից զօրաւոր զանգուածի թէ քաղաքական, թէ կրօնական և թէ տնտեսական շարունակեալ ազդեցութեան տակ, այս ազդեցութիւնը նոյն հասարակութեան համար մի տեսակ ճնշում է դառնում արդէն, և տարիների ու դարերի ընթացքում տկար տարրը լուծվում է զօրաւորի մէջ։ Երկու պայծառ օրինակ ունենք՝ հայոց համար՝ այս իրողութեան. առաջինը՝ Հնդկաստանի հայ գաղթականութիւնն է, և երկրորդը՝ Լեհաստա-

ՆԱԽԱԳԻԾ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

Ամենայն հարգանքով ներկայացնում ենք Ձեզ Նախագիծ առաջին գլխավոր կոմիտեի նիստի։

Ներկայ են՝ Ս. Ս. Ամիրխանյան, Ս. Ս. Ավետիսյան, Ս. Ս. Ալիխանյան, Ս. Ս. Ասլանյան, Ս. Ս. Ասլանյան, Ս. Ս. Ասլ

ամսի 4-ին, պ. կառավարչապետին ընդունելու համար այստեղ մեծ պատրաստութիւններ են տեսնում։ Քաղաքը 1000 ռուբլի է յատկացրել այդ նպատակով։»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը. «Մօտ օրերս լինելու են տեղիս թեմական դպրանոցի համար նոր հոգաբարձուների ընտրութիւնները. այժմեան հոգաբարձուները հաղիւ թէ պահպանեն իրանց նախկին պաշտօնները։»

—

«Новое Обозрѣніе» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովը, չը սպասելով կ. Պոլսի հայ դերասանական խմբի գալուն, վճռել է սկսել մեր քաղաքի արքունական թատրոնում հայոց ներկայացումները։ Եթէ իւրաքանչիւր ներկայացում 200 ռուբլուց ոչ պակաս եկամուտ կը տայ՝ ներկայացումները կը շարունակվեն։

—

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, 15 տարի սրանից առաջ Կրիմի ԵԱԼՏԱ քաղաքի հայոց հասարակութիւնը կազմել է մի «Հոգատար ընկերութիւն» և սկսել է փողեր հանգանակել Եալտայի մէջ հայոց աղօթատուն չինելու համար։ Այժմ վերոյիշեալ «Հոգատար ընկերութեան» գործավար՝ Յովհաննէս Լազարեանց հաղորդում է մեզ, որ հանգանակութեան սկսվելու օրից մինչև ներկայ 1892 թիւը հաւաքվել է յիշեալ նպատակով 1835 ռուբլի 60 կոպէկ դրամ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Ծիրանաւոր կոչված ուխտատեղի տանող ճանապարհի վրա, հրէաների գերեզմանոցից ոչ հեռու՝ կառուցվելու է երկաթէ նոր կամուրջ։

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի քարտուղար պ. Աւետիք Եղեկեանի հրաժարականից յետոյ, նոյն խորհրդի քարտուղար՝ սեպտեմբերի 24-ին ընտրվեց ճաշերի առաւելութեամբ պ. Համբարձում Առաքելեանց։ Նիստի վերջում խորհրդի նախագահ պ. Ալէքսանդր Անանեան շնորհակալութիւն յայտնեց պ. Եղեկեանին, ընկերութեանը ցոյց տուած տասնամեայ բարեխիղճ և անբիծ ծառայութեան համար։ Պ. Համբարձում Առաքելեան Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղում զանազան ժամանակներում կատարել է՝ խորհրդի քարտուղարի, խորհրդի անդամի և նոյն իսկ նախագահի պաշտօնը։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ հաղորդում են հետևեալը. «Սեպտեմբերի 12-ին նահանգական բժիշկը եկաւ Նոր-Բայազէտ և այցելեց խօլէրային հիւանդանոցը. նա շատ գոհ մնաց, մանաւանդ սանիտարների գործունէութիւնից, և նրանց իր շնորհակալութիւնը յայտնելով, խնդրեց նրանց անուանացուցակը, աւելացնելով որ առանց հետևանքի չի մնայ նրանց անձնազոհութիւնը։ Այժմ խօլէրան մեղմանում վերջացել է արդէն։ Միայն երկու հիւանդ կայ հիւանդանոցում, իսկ նոր հիւանդացողներ չը կան։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են հետևեալը. «Առաջներում լուրեր էին պատվում այստեղ, թէ խօլէրայից մեռածներից շատերին հանում են խօլէրային գերեզմանատից և նորից թաղում են սովորական գերեզմանոցում։ Այժմ յայտնվեց որ այդ լուրերը ճիշդ են եղել։ Դրա վրա, ուշադրութիւն ենք դարձնում։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են հետևեալ լուրերը. «Անցեալ օր մի հայ վարպետ տեղիս զօրանոցի տանիքից անզգուշութեամբ վայր ընկնելով՝ մի քանի ժամից յետոյ վախճանվեց։ Ամիս 19-ին տեղիս դաւառական վարչութեան տան մօտ, ցերեկով, մի թուրք երեք անգամ ատրճանակ արձակեց իր թշնամի մի այլ թուրքի վրա և ծանր կերպով վիրաւորեց այդ վերջինին։»

—

Լրագիրներում հրատարակվող պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ խօլէրան մեր երկրի այս կամ այն նահանգում, թէև թոյլ նշաններով, դեռ տեղ տեղ շարունակվում է։ Ուրեմն հարկաւոր է դեռ շարունակել պահպանել նախազգուշացնող առողջապահական միջոցներ, որ ժողովուրդը գործ էր դնում խօլէրայի ժամանակ։

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ սեպտեմբերի 19-ին այդ քաղաքի հայ թատրոնասէրները, խանդամիտ Բեանցի թատրոնական դահլիճում, յօգուտ Շուշու թեմական դպրանոցի չքաւոր աշակերտների՝ ներկայացրին «Ռուզան» դրաման։ Կանանց դերերում խաղում էին՝ տ. Նարամիչեան, և Գանջեցեան, Թառումեան ու Բաղդասարեան օրիորդները։

—

Քաղաքային վարչութեան և ոստիկանութեան ներկայացուցիչները մտադիր էին քաղաքում կատարել, սեպտեմբերի 27-ին, մի ընդհանուր դռնացողական մաղթանք, խօլէրայի անցնելու պատճառով։ Սակայն որովհետև վերջին օրերս էլի խօլէրայի մի քանի դէպքեր տեղի ունեցան, ուստի մաղթանքը յետաձգված է։

—

Լոյս տեսաւ Խրիմեան Հայրիկի «Դրախտի ընտանիք» գիրքը՝ երրորդ տպագրութեամբ, հրատարակութիւն Թիֆլիսի «Հրատարակչական ընկերութեան»։ Գրքին կցած է Հայրիկի պատկերը. բայց ինչ պատկեր,—մի անճոռնի կլիշէ, որը հրապարակ հանելու համար պէտք է կամ վերին աստիճանի անհոգ լինել, կամ անճաշակ։ Եւ ընկերութեան վարչութիւնը այդ պատկերը դնելով «Դրախտի Ընտանիքի» ճակատին, ցոյց է տալիս որ ինքը կամ վերին աստիճանի անհոգ է, կամ զուրկ որ և է ճաշակից։

—

Պետական կալուածների մինիստրութեան Կովկասի լիազօր ներկայացուցիչը մեզ ուղարկել է նոր լոյս տեսած մի գիրք. դա է «Отчетъ о дѣятельности Кавк. филоксернаго комитета», վասն 1891 թ։ Գիրքը պարունակում է մանրամասն տեղեկութիւններ, և նոյն իսկ Քութայիսի և Թիֆլիսի նահանգների խաղողի այգիների քարտէզը։

—

Նկարագրելով կ. Պոլսի Ռուսական ժողովի մի նիստի վիճաբանութիւնները, «Հայրենիք» լրագիրը գրում է ի միջի այլոց և հետևեալը. «Պատիկ դաղարէ մը յետոյ, Սպանդարեան Սպանդար էֆէնտի խօսք առաւ և առաջարկեց կենտրոնացման դրութիւնն իր ծայրահեղութեան հասցնելով՝ ջնջել բոլորովին հոգաբարձութիւններն ու վարժարաններու կազմակերպութիւնն ու վարումը միմիայն Ռուսական խորհուրդի ձեռքը յանձնել։» Այս առաջարկը միաձայն մերժվել է։

—

Տպագրելով Երևանի թեմի թեմական տեսուչ Մեսրոպ քահանայ Մելեանի նամակը, պարտաւորութիւն ենք հանդիսում յայտարարել, որ մեր լրագրի մէջ առաջ բերած փաստերը տեղի են ունեցել ոչ թէ Երևանի թեմում, այլ Թիֆլիսի թեմում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Սեպտեմբերի 10-ին (22-ին) Ֆրանսիան ոտնեց հանրապետութեան հռչակման հարիւրամեակը։ Թէև նախընթաց օրը անձրև էր գալիս, բայց ազնախմբութեան օրը՝ աշնանային պարզ արեգակը լուսաւորեց մայրաքաղաքը, որի բոլոր փողոցները զարդարված էին ազգային գոյները կրող դրօշակներով։ Պանթէօնը շրջապատող փողոցներում և հրապարակներում խռնված էր անթիւ բազմութիւն։ Պանթէօնի շինութիւնը նմանապէս զարդարված էր դրօշակներով և կանաչով, որի մէջտեղում փայլում էին ոսկեայ տառերով՝ շինութեան ճակատում գրված խօսքերը. «Ֆրանսիայի մեծ մարդկանց՝ երախտագէտ հայրենիքը»։ Բայց մանաւանդ հանդիսաւոր էր երևում այդ օրը Պանթէօնի ներսը, որտեղ կանգնած են Ֆրանսիայի երևելի մարդկանց արձանները. այդտեղ կը տեսնէք Լաֆայետի, Վոլտերի, Ռուսսոյի, Միրաբոյի, Կուվիէի, Լապլասի և այլ աշխարհահռչակ Ֆրանսիացիների արձանները։ Հանրապետութեան նախագահ Կարնօի և մինիստրների՝ Պանթէօնը ներսը մտնելուն պէս՝ մի քանի հարիւր հոգուց բաղկացած երգեցիկ խումբը երաժշտութեան դաշնակցութեամբ երգեց «Amour sacré de la Patrie» յայտնի օրհներգը։ Ապա երբ սկսեցին նուագել Chant du départ» ազգային երգը, ներկայ գտնվածների ոգևորութիւնը իր գագաթնակէտին հասաւ։

Պարիզի փողոցներով անցան պատմական հանդիսաւոր գնացքներ. մինն ուղևորվեց «Esplanade des Invalides» հրապարակից, իսկ միւսը «Palais de l'Industrie» շինութեան մօտից, և անցան մայրաքաղաքի ամենագլխաւոր փողոցներով։ Իւրաքանչիւր հանդիսաւոր գնացքի մէջ մասնակցում էին մինչև 4,000 անձինք, որոնք փառաւոր հնադարեան կառքերի վրա՝ փոխաբերական կերպով ներկայացնում էին՝ Մարսելիէզը, Վալմիի մօտ յաղթութիւնը, հանրապետութեան յաղթանակը, աշխատանքի և խաղաղութեան դաշն, և այլն։

Կարելի է ասել, որ ամբողջ Պարիզը ոտքի վրա էր այդ հանդէսը տեսնելու համար։ Աննկարագրելի էր ժողովրդի ոգևորութիւնը, որը արտայայտվում էր աղմկալի աղաղակներով և անվերջանալի ծափահարութիւններով։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍՏԷՆՀՕՊ

Ինչպէս յայտնի է, այս օրերս Պարիզում փորձեր են լինում խօլէրայի թոյնը մարդկանց պատուաստելու։ Ի միջի այլոց՝ իր վրա փորձ փորձեց խօլէրայի թոյնը պատուաստելու, Ամիրիկայի Նիւ-Եօրկ քաղաքում հրատարակվող «New-Iork-Herald» լրագրի աշխատակից պ. Ստէնհօպ։ Պարիզից պ. Ստէնհօպ, մի քանի շաբաթ առաջ անմիջապէս ուղևորվեց Համբուրգ քաղաքը, որպէս զի փորձի պատուաստի պահպանողական ոյժը։ Նա մտաւ խօլէրային հիւանդանոցը և սկսեց անձնուիրաբար հոգ տանել հիւանդների մասին։ Ստէնհօպ նոյն իսկ ծայրահեղութիւններին էր հասցրել իր փորձերը. նա պառկում էր խօլէրայից մեռածի անկողնում, կամ նոյն իսկ դիակի կողքին, խմում էր նոյն բաժակից, որից խմում էր խօլէրայով հիւանդը, դիտմամբ վարակված, կեղտոտ ջուր էր խմում, վերջապէս ամեն տեսակ միջոց էր գործ դնում, որպէս զի վարակվի։ Սակայն նա չը վարակվեց, և կատարելապէս առողջ մնաց։ Այնու ամենայնիւ բժիշկները, որոնք զարմացած էին մնացել Ստէնհօպի անձնուիրութեան, անձնազոհութեան և քաջութեան վերաբերմամբ, հաստատապէս չեն կարող վկայել, որ այդ փորձերը ապացուցանէին խօլէրային թոյնի պատուաստի գործնականութիւնը՝ ուսումնական տեսակէտից։ Ստէնհօպի չը վարակվելը կարող է հետևանք լինել նրա կազմուածքի անձնական տրամադրութեան. դա կարող է մի բացառական կազմուածք լինել, որն առանց պատուաստման էլ՝ հակում կամ տրամադրութիւն երբէք չէ ունեցել խօլէրայով վարակվելու։ Եզակի փաստը չէ կարող ծառայել գիտութեան համար որպէս նիւթ՝ որ և է ճիշդ ուսումնական եզրակացութիւնների համար։ Այս օրերս, ինչպէս կարդացինք լրագիրներում, աշխարհահռչակ Վիրխով ուսումնականը միտք յայտնեց, որ Ստէնհօպի փորձերը ուսումնական որ և է արժէք չունեն։

ՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը հետևեալ պաշտօնական յայտարարութիւնն է տպագրել լրագիրներում.

«Օգոստափառ սուլթանն իր աշխարհահռչակ գթասրտութեամբ շնորհ ըրաւ՝ ի վաղուց անտի տերութենէն ազգային ս. Փրկչեան հիւանդանոցին յատկացեալ օրական հացին և մսին քանակութիւնը կրկնապատկել։ Այս առթիւ սրբազան Պատրիարքը հօր կողմէ առաջիկայ կիւրակէ, ս. Փրկչեան հիւանդանոցի մատրան մէջ՝ հանդիսաւոր աղօթք և բարեմաղթութիւնք պիտի կատարուին՝ վասն արևշատութեան թանկագին կենաց օգոստափառ և գորովագութ կայսերս։ Հետևաբար այսու պաշտօնական ծանուցմամբ կը հրաւիրվին Ազգային ժողովոց, վարչական խորհրդոց և ս. Փրկչեան հիւանդանոցի հոգաբարձութեան անդամք՝ որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ ի մատրան հիւանդանոցի։»

Կատարվել է փառաւոր մաղթանք. և աւելացրած մսի ու հացի առթիւ՝ Պոլսի լրագիրները տպագրել են առաջնորդողներ և ուղերձներ նուիրված թիւրքաց սուլթանին։

ԹՕԼԷՐԱ ԷՐԶՐՈՒՄԻ ԵՒ ՏՐԱՊԻԶՕՆԻ ՎԻԼԱՅԷԹՆԵՐՈՒՄ

Կ. Պոլսից գրում են. «Կարնոյ կուսակալութիւնը սեպտեմբեր 3 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց նախարարութեան, թէ այս օրերս նահանգին այլ և այլ կողմերուն մէջ պատահած մահերու համար՝ թէև ըսուած է թէ հնտախտի հետևանք են, սակայն գիտական կերպով հաստատուած է թէ երեք տեղերու մէջ պատահած վեց մահերը միայն հնտախտէ են։ իսկ միւսներն այդ հիւանդութենէ չեն։ Այդ դէպքերու չը կրկնապատկուելուն համար վստահութիւն դոյացած է։ Տարափոխիկ հիւանդութիւններէ մահ պատահած տեղերն՝ հարկ դատուած ըլլալով քարանթինայի ներքև առնուլ, քարանթինայի քննիչը բժիշկի մը հետ ղրկուած է դէպքեր պատահած տեղերն քննական պտոյտ մը կատարելու, և հարկ եղած առողջապահական միջոցներն ի գործ դնելու համար։

«Տրապիզոնի կուսակալութիւնը սեպտեմբերի 4 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց նախարարութեան, թէ սեպտեմբեր 3—4, Տրապիզոնի քաղաքին ու շրջակայից և Բլաթանի մաքրանոցին ու գիւղաքաղաքին մէջ ոչ և է դէպք չէ պատահած. Բլաթանի մաքրանոցէն փոքր նաւ մը, հինգ նաւատներով՝ քարանթինի պայմանին աւարտելով մեկնած է, և այժմ քարանթինա կը սպասեն 16 փոքր նաւեր ու 78 նաւատիներ։»

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ԻԴԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում անց 20 տարի է արդէն, որ գոյութիւն ունի ժուժկալութեան կանանց ընկերակցութիւնը, որն իր գոյութեան ամբողջ ժամանակամիջոցում հետզհետէ համակրութիւն վաստակելով հասարակութեան կողմից, այժմ իր անդամների թիւը հասցրել է արդէն 200,000-ի։ Հանրապետութեան հինգ նահանգներում ընկերակցութեանն աջողվել է հրատարակել տալ խիստ օրէնքներ արբեցութեան դէմ, իսկ 34 նահանգներում ծխախոտ ծխելու դէմ։ Բացի սրանից Ուսմինգ նահանգում ընկերակցութեանն աջողվել է ձեռք բերել ընտրողական իրաւունք իգական սեռի համար։

ՑՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԲՈԼԳԱՐԻԱ

Սատիկ յուզում է տիրում ամբողջ Ցունաստանում այն նոր օրէնքի հրատարակման առիթով, որով բոլգարական կառավարութիւնը հրամայում է իշխանութեան մէջ եղած բոլոր դպրոցներում աւանդել առարկաները միմիայն բոլգարական լեզուով։ Բոլգարիայում եղած բազմաթիւ յունաց դպրոցները այդ պատճառով ինքնայօժար կերպով փակվեցան։ Վարնայից գրում են «Times» լրագրին, որ մեծ յուզում է տիրում բոլգարաբնակ յոյների մէջ էլ. նրանցից շատերը, նոյն իսկ առևտրականները, թողնում են երեսի վրա իրանց գործերը և պատրաստվում են գաղթել Բոլգարիայից։ Թէ Ցունաստանում, թէ Սերբիայում, և թէ կ. Պոլսում հրատարակվող յունաց լրագիրները այդ խնդրի առիթով անդադիր աղմուկ բարձրացրած լինելով, յունաց կառավարութիւնը այդ նոր օրէնքի պատճառով՝ խիստ առաջադրութիւն արեց բոլգարական կառավարութեանը, որով բողոքում է նոր օրէնքի դէմ։ Ցունաց լրագիրները կարծում են որ Բոլգարիայի նպատակն է՝ խպառ ջնջել յունաց լեզուի գործածութիւնը Բոլգարիայում։

Այնու ամենայնիւ յոյս կայ, ինչպէս կարծում է Վարնայում հրատարակվող յունարէն «Odysseus» լրագիրը, որ բոլգարական կառավարութիւնը վերջ ի վերջոյ կը զիջանի յոյն ազգաբնակութեան բողոքներին և յունաց կառավարութեան պահանջներին՝ թոյլատրելով Բոլգարիայում եղած այլ և այլ ազգութիւններին պատկանող տարրական դպրոցներում շարունակել դասաւանդութիւնը իրանց մայրենի լեզուներով։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի։ «Journal de St. Pétersbourg» ասում է, որ աւստրիական կայսրի դահլիճ ճառի և կոմս Կալնոկիի ճառի մէջ խաղաղասիրական ոգի կայ։ Լրագիրը մատնանիշ է անում այն բանի վրա, որ աւստրիական մինիստրը երկու անգամ կրկնել է, թէ Աւստրիայի և Ռուսաստանի արքունիքների և կառավարութիւնների յարաբերութիւններ բարեկամական և շատ լաւ են, այլ և, որ բոլոր կառավարութիւններից ստացված են տեղեկութիւններ, որ

ոչ ոք մտադիր չէ սկսել յարձակողական պատերազմ։

ՎԻԵՆՆԱ, 23 սեպտեմբերի։ Վիեննայից, շաբաթ օր, առաւօտեան 7 ժամ 50 րոպէին ուղևորված պօրուչիկ Միկլօս առաջինը հասաւ Բերլին, երեքշաբթի օր, առաւօտեան 9 ժամ 35 րոպէին. երկրորդ եկողը պօրուչիկ Զավօսսի էր, մինչև 3 ժամ 40 րոպէին եկան էլի չորս ձիաւորներ։

ԲՈՒԻՈԱՐԵՍՏ, 21 սեպտեմբերի։ Պաշտօնապէս յայտարարված է, որ այն նաւերը, որոնք գալիս են Սև ծովի ռուսական նաւահանգիստներից, կանտինի կը ենթարկվեն Սուլինում 11 օրով։

ՊԱՐԻԶ, 24 սեպտեմբերի։ Պարիզի բօրսային մակլերները կամենալով վերացնել մանր բօրսան, ուր երեկոյեանները հաւաքվում են բօրսային նապաստակները, մտադիր են հիմնել մեծ բօրսա երեկոյեանները, այն պայմանով, որ այնտեղ բոլոր օպերացիաները կատարվեն ժամանակով և կանխիկ դրամով։

ԼՕՆԴՕՆ, 24 սեպտեմբերի։ Պօէտ Տէնիսօն մահամերձ է։

ԼՕՆԴՕՆ, 25 սեպտեմբերի։ Բանաստեղծ Տէնիսօն այս գիշեր վախճանվեց։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ **„ԱՐԱՔՍԻ“** առաջին գիրքը, որը և սեպտեմբերի 20-ից կուղարկվի Հանդէսի բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԷ

Հասարակական խնդիրներ. Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը.—Ամենապատիւ Խրիմեան Հայրիկ.—Գերապատիւ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան.—Տաճկահայաստանի բարենորոգութեան ծրագիրը։

Տեղագրական. Ծաղկածոր և կեչառու վանքերը. Էմիր.—Ծաղկածոր և կեչառիկ. բանաստեղծութիւր Ռ. Փ. Շ.—Ս. Մակարայ վանքը.—Մի հայաբնակ գիւղ Ղազախում. Բ. Թումանեանց.—Սևանայ լիճը և վանքերը.—Մենաստան Հոռոմոսի։

Բանասիրական. Բաֆֆիի պարսկական նամակներ (Ուսում և գրականութիւն, Պարսկական աղանդներ և Դերվիշներ).—Արև, բանաստեղծութիւն Աչըղ-Զիւանի։

Կենսագրական. Սարգիս Սարգսեան.—Իմ թագաւորութիւնը, բանաստեղծութիւն Հայ-Արմէնի—Կաղնի, բանաստեղծութիւն, Բարկասի։

Մատենագրական. Հայդուկներ, Բաֆֆի,—Վաղէմի կալուածատէրեր, Գոգոլ. (Թ. Աթանասեանց).—Երբ ալեկոծվում է արտը, Լերմօնտով, (Թ. Մալխասեանց)։

Մատենախօսական. Մի քանի խօսք Բաֆֆիի նշանակութեան մասին, Թանդեանց,—Voyage en Turquie d'Asie. Armenie, Kurdistan et Mésopotamie.—Իրական կեանքի նուագներ,—Ժողովրդի կրթութեան գործը մեզանում. Դրին,—The Place and Importance ef Armenian in Compar. Philology.—Նոր տարու առիթով. բանաստեղծ. Գ. ք. Մկրտումեանցի։

Ներքին տեսութիւն. Կաթողիկոսական ընտրութիւններ։

Ազգային յիշատակարան.—Թղթակցութիւններ.—Այլ և այլք.—Մահացուցակ. Ռափայէլ Պատկանեան։

Գեղարուեստական.—Նկարների մասին. Լ. Մազիրեանց.

«ԱՐԱՔՍԻ» ԱՅՍԳՐՔԻ ՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ

Բնագրում. Խրիմեան Հայրիկ.—Մատթէոս եպ. Իզմիրլեան.—Կեչառու վանքերի ընդհանուր տեսարանը.—Ս. Գրիգոր Լուսաւորչի տաճարը.—Նոյնը հարաւային կողմից.—Ս. Մակարայ վանքը.—Քարվանսարայ գիւղը.—Սևանայ լիճը և վանքերը.—Ս. Յովհաննէս Եկեղեցին.—Ուխտաւորների հիւրատունը Ս. Սևանայ վանքում.—Մենաստան Հոռոմոսի.—Սարգիս Սարգսեան.—Ռաֆայէլ Պատկանեան.

Բնութիւնը Հայաստանում. Ղարսի ձորը և Ախուրեան գետը.—Մեծ-Ղարաքիլիսայ աւանը.—Խրամ գետի աւազ կամուրջը Սանահնում.—Ձկնորների նաւահանգիստը ձորոխ գետի վրա։

Գեղարուեստական բաժնում. Խրայելացոյ անցեալը կարմիր ծովից, նկար Այվազովսկու։—Ցիսուս և անառակ կինը, նկար Սեմիրադսկու։—Նաբիացի գերուհու երգը, նկար Սեմիրադսկու։—Բոկոան, նկար Վերեշչագինի.—Ձկնորսուհի, նկար Ֆոն-Բոկի։—Հռոմայեցի աղջիկներ, նկար Վերեշչագինի։—Գիշերը Սև ծովի վրա, Մահտեսեանցի։—Ձիւնահալքը Կովկասում, նկար Բաշինջաղեանցի։—Զէյբեկի կին. քանդակագործութիւն Մ. Ոսկանի։—Զէյբեկ, քանդակագործութիւն Մ. Ոսկանի։—Երեք դիցուհի, նկար Թումանի։—Դարուն, Ռէտիկի, Գեղարուեստական բաժնի չապկի վրա։

"ԱՐԱՔՍ" գրական և գեղարուեստական վեցամեայ պատկերազարդ հանդիսի բաժանորդագինն է . . . . . 3 *ռուբլի։*
Իւրաքանչիւր գիրքը առանձին արժէ . . . . . 2 *ր. 50 կ.*

„ԱՐԱՔՍԻ“ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ԱՐԱՔՍԻ“ *երկրորդ գիրքը մամուլի տակ է. կը հրատարակվի դեկտեմբերին։*

«ԱՐԱՔՍԻ» խմբագրութեան հետ գործ ունեցողները և բաժանորդ գրվողները դիմելու են Սիմէօն Գուլամիրեանցին ընդ միշտ այս պարզ և միանգամայն ապահով հասցէով. С. Петербургъ, Симеону Гуламирянцу *կամ.* St. Petersbourg. Simeon Goulamiriantz. № 110.

Л. И. МАТРОСОВИЧЪ окончившій пражскую консерваторію (спеціально педагогическій курсъ рояли и композиціи) съ ДИПЛОМОМЪ 1-ой СТЕПЕНИ, даетъ уроки музыки и теоріи по программѣ русскихъ консерваторій. Адресъ. Тифлисъ, Магазинъ М. Цейтлинъ. уголъ Дворцовой.
№ 110. 1—5

Մի անձն, 25 տարեկան, վճարելով կառավարութեան հսկողութեան տակ գտնվող կեանքի ապահովագրութեան **ԷԿՎԻՏԷԲԼ** *ընկերութեանը տարեկան 20 ռուբլի, ապահովացնում է ընտանիքը, իր մահվան դէպքում, ընկերութիւնից անմիջապէս ստացվելի 1000 ռուբլիով։ Իսկ եթէ այդ անձը կը հասնէ 45 տարեկան հասակին, այն ժամանակ ընկերութեան մէջ նրա մոցրած բոլոր փողերը, աւելորդով, անձամբ իրան են վերադարձվում։ Բոլոր մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ընկերութեան ագենտի, Ա. Վ. Մէլիք-Մինասեանցի մօտ, Թիֆլիսում, կալուածական Բանկի տանը, Դվորցովայա փողոցում, № 119.* № 108 2—3

ԳԺՄԳԼՔՍԳՈՅՆ "ՎԻՄՅՆ.

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, *„ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է* **ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ**, *քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ բէստօրան, տելեֆօն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։*

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 36—130 (2.)

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Ընդունում և պատրաստում է աշակերտներ գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպէս զէմէէրնի, տեխնիկական և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Պանսիօնում աւանդվում են՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն։

Աշակերտներ ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթևեկներ։

Պանսիօնում դասախօսում են գիմնազիական և ռէալական ուսումնարանի ուսուցիչներ։

Հասցէն. Тифлисъ, Сололаки, Вельяминовская улица, домъ № 11.

(№ 148) 4—10 (Շ)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) դեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է հոկտեմբերի 1-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիզօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Դավիթօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

10—25

ՀԱՅ ՆԿԱՐԻՉ ԵՆՕՎԼԵ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Կօջօր ամարանոցից Թիֆլիս վերադարձած լինելով, բնակվում է Պուշկինսկայա փողոցում, ռուսաց Սեմինարիայի և Սկուէրի դիմաց, „Аѳины“ *հիւրանոցում, № 10.*

Նկարչին տեսնելու փափագողները կարող են գտնել նրան իր բնակարանում ամեն օր, երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժամ. № 107 3—5

ՄՐՑՈՂ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)

Գօլօվինսկեյ պրօսպեկտ, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Մդիվանիի

Ստացել ենք ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ աշնանային և ձմեռային սեզօնի համար ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ՝ ամենավերջին ձևի։

Գները՝ ամենքին մատչելի են և անհամեմատ աւելի էժան՝ քան անցեալ տարիները։

Խուզավերդեան եղբայրներ

№ 93 5—15

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՄՕՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. Ի. ՄԱՆԴԼ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, տուն Միրիմանեանի

Պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի մեծարգոյ հասարակութեանը, որ անցեալ տարիների օրինակով նշանակված է ներկայ սեպտեմբեր ամսի 18-ից, կարճ ժամանակով ԷԺԱՆԳԻՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ վերջնական գներով, սեզօնից մնացած բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաների պատրաստի հագուստներ։ Զիջումն կը լինի ֆաբրիկայի գներից շատ պակաս։ Գները նշանակված կը լինեն „եարլիկների“ վրա կապոյտ մատիտով № 50.

ՀԱԻԱՏԱՐՄԱՏԱՐ ՄՕՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՏԱՆ **Ս. Ր. ԴՕՎԼԱԹԵԱՆ**

№ 107 3—5

ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՍԻՍՈՒՐՉՈՒՀԻ (*այր և կին*), *որոնցից առաջինը Գ. կարգի և ցէնզ ձեռք բերած, իսկ երկրորդը Ը. կարգի, հայոց դպրոցներում տեղ են որոնում։ Համաձայն են գնալ գաւառ։ Հասցէն.* Тифлисъ, Авлабаръ, Константиновская ул., Теръ-Гевондянцу. № 107 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Сентября 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.